բոլեան մանր պետութիւնք։... Զանիր զի տունն Ֆիէսոյի յայսոսիկ աւուրս վաճառելոյ վերայ է, և յոյժ յուսամք մեք գնել զնա, զի գնացեալ տեսաք զայն ընդ յօհաննէս աղային, և յոյժ հաւանեցայ ընդ այն, զի ամենայնիւ վայելուչ էր, և թէ վեց հազարաւ կարասցուք կորզել զնա, մեծ ինչ է, զի տէրն ութն հազար խնդրէ[1]։ (Մելգոնեան առ Հ. Մկրտիչ, 1756 ի սեպտ. 6. [Ս. Ղազար])։

ՃԻ.

Բարուք գրեաց ձեզ հայր Մկրտիչն, զնոյն գրեմ և ես վասն նկարի պատկերաց եմիփորոնի պատրիարգին[2], զորմէ խորհեալ է յօհաննէս աղայն ընծայ տալ զայն նմա ի մէնջ. ասեմ, թէ այսուհետև անարժան է նա բարեկամութեան մերում, զի անզեղջ հայհոյիչ, և անարգիչ գտաւ աստուծոյ և սրբոց նորա և գլխոյ եկեղեցւոյն և լուսահոգի հօր մերում իբրև զնեռն երևեալ չարութեամբ ի ժամանակի մերում։ (Հ. Իգնատիոս առ Մելգոնեան, 1756 սեպտ. 15. Կ. Պոլիս)։

ՃԻԱ.

Զկազմուածս ընկուզի պատուհանից գրքատանն սկսաք, զորոյ ծախուցն եթէ զկէսն վճարեսցէ եպիսկոպոսն ըստ խոստմանն՝ մեծ ինչ է. այլ և կամիմք բուռն արկանել զչինուածոյ ջրհորոյն մեծի. ուստի որ ինչ գտանի ի ձեռս ձեր հաւաքեալ փութով յղեսջիք։ (Հ. Գրիգոր [Գանագեռցի] առ Հ. Միք. Հ. Իգն. Հ. Զաքար, Հ. Մկրտիչ [քուղր հասարակաց], 1756 Հոկտ. 11. [Ս. Ղազար])։

ՃԻԲ.

Զմուստաֆայ փաշայ վէզիրն փոխեցին և աքսորեցին ի սատոս կղզին։ (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1757 յունվ. 17 Կ. Պոլիս)։

ՃԻԳ.

Զմուստաֆայ փաշան զվէզիրն ընկէց ի վէզիրութենէն... սուլթան օսմանն, և զռահիթ փաշան հալպու ընտրեաց ի վէզիրութիւն, և այժմ խեամախայ այսինքն վէքիլ վէզիրի նստեալ կայ յըստամպոլ և սպասեն ռահիթ փաշային։ (Հ. Զաքարիա վ. Ա. առ Մելգոնեան, 1757 Յունվ. 19. [Կ. Պոլիս])։

ՃԻԴ.

Ահագին սահակ վրդ.ն ընտրեալ ի կաթողիկոս էանց յիւսկիւտար յաւուրս յայսոսիկ երթալ ի կողման կարնոյ, թէպէտ և դժուարին երևի երթալ նմա, քանզի աւեր են կողմանքն արևելից։ Իսկ պատրիարգն մեր յակոբ վրդ.ն ծանր հիւանդ կայ ի ձեռս բժշկաց... հիւանդութեամբ իմն, որ վէրեմ կոչի։ (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1757 մայիս 18 ի Կ. Պոլիս)։

---

1. Մինչև գրեթէ 35 տարի առաջ Ֆիէսոսոյի գիւղի այդ շէնքը կը ծառայէր Մայրավանքիս իբր ամարանոց, մինչ յետոյ փոխանակեց անոր Ս. Զենոն գիւղը, իսկ Ֆիէսոսոյ կը մնայ իբր հասութաբեր կալուած Ուխտիս։

2. Կ'ակնարկէ զՅակոբ պատրիարք Նալեանը։